ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ
ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**Բարսեղյան Սամվել Մարտիրոսի**

# Սոցիալ-իրավական պետության սահմանադրական մոդելի կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում

ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2021

**ИНСТИТУТ ФИЛОСОФИИ СОЦИОЛОГИИ И ПРАВА НАН РА**
**Барсегян Самвел Мартиросович**

# Проблемы становления конституционной модели социально-правового государства в Республике Армения

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 - «Публичное право (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право,государственное управление)»

ЕРЕВАН – 2021

**Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդում**

Գիտական ղեկավար՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Հ. **Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, **Ն.Գ. Սուքիասյան**

Իրավաբանական գիտությունների թեկնածու **Հ. Զ. Սարգսյան**

Առաջատար կազմակերպություն՝ **«Եվրասիա» միջազգային համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022թ. հունվարի 14-ին . ժ. 14$^{00}$-ին ՀՀ ԳԱԱ Փիլիոփայության,սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Իրավագիտության 041 մասնագիտական խորհրդի նիստում (ք. Երևան, Արամի 44):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Ինստիտուտի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2021 թ. նոյեմբերի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ **Ա.Աբրահամյան**
Իրավաբանական գիտությունների թեկնածու

**Тема диссертации была утвервждена на заседании Ученого совета Института философии, социологии и права НАН РА**

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Г.Г. Сафарян**

Официальные оппоненты: доктор юридических наук, **Н.Г. Сукиасян**

кандидат юридических наук, **О.З.Саргсян**

Ведущая организация: **Международный университет «Евразия»**

Защита состоится 14 января 2022 г. 14$^{00}$ часов на заседании специализированного совета 041 по Юриспруденции ВАК РА при Институте философии, социологии и права НАН РА (г. Ереван, ул.Арама 44).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Институте философии,социологии и права НАН РА.

Автореферат разослан 30 ноября 2021 г.

Ученый секретарь специализированного совета **А.Абраамян.**
кандидат юридических наук

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության թեմայի արդիականությունը.** Մեզանում իրականացված սահմանադրական բարեփոխումների համատեքստում առավել կարևորվում է սոցիալ- իրավական պետության կայացումը և մարդու իրավունքների երաշխավորված պաշտպանության հաստատումը:

Ինչպես, 1995 թվականի Սահմանադրությունը, այնպես էլ 2005 և 2015թթ. փոփոխված խմբագրությամբ սահմանադրական տեքստերը ազդարարում են, որ «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»[1]: Սակայն իրականում հսկայական աշխատանք է տարվելու, որպեսզի վերոնշված սահմանսդրական նորմ-նպատակը կամ նորմ-սկզբունքը մեզանում իրականություն դառնա: Այդ աշխատանքները բազմազան և բազմաբնույթ են, որոնցից մեկն էլ հետազոտական աշխատանքների իրականացումն է: Այս առումով, հետազոտության թեմայի արդիականությունը նաև նրանում է, որպեսզի բացահայտի սոցիալ-իրավական պետության էությունը, առանձնահատկությունները և կայացման օբյեկտիվ անհրաժեշտությունը, քանի որ միայն սոցիալ-իրավական պետությունում է հնարավոր ստեղծել կենսունակ և ուժեղ հասարակություն, որում գերակայում են մարդու իրավունքներն ու ազատությունները, քաղաքական ազատությունները և բազմակարծությունը, իսկ պետահիրավական համակարգը ապահովում է այնպիսի կառուցակարգեր, որոնց միջոցով մարդու իրավունքները սահմանափակում են հանրային իշխանության սահմանները, ինչպես նաև վճռորոշ են դառնում հանրային իշխանության գործունեության համար:

Այդ կապակցությամբ կարելի է արձանագրել, որ նախատեսվելիք հետագա սահմանադրական բարեփոխումներն ունհրաժեշտ են մեզանում սոցիալ-իրավական պետության կայացման և մարդու իրավունքների երաշխավորված պաշտպանության համար:

Վերոնշվածով է պայմանավորվում թեմայի ընտրության և դրա գիտական

---

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (Փոփոխություններով): Երևան, 2015 (Պաշտոնական տեղեկագիր, հատուկ թողարկում), հոդվ.1:

հետազոտության անհրաժեշտությունը:

**Թեմայի գիտական հետազոտության վիճակը.** Սույն ատենախոսական աշխատանքի թեման հայրենական իրավագիտության մեջ բավարար ուսումնասիրված չէ:: Քննարկվող թեման առավել խորն է ուսումնասիրվել ռուսական և եվրոպական իրավաբանական գրականության մեջ:

Սահմանադրական բարեփոխումներից հետո ընկած ժամանակաշրջանում անհրաժեշտություն է առաջացել վերստին իմաստավորելու սոցիալ-իրավական պետության էությունը, առանձնահատկությունները և կայացման հիմնախնդիրները, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ արդիական մոտեցումները և դրանց իրագործման կառուցակարգերը Հայաստանում:

**Հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել** սոցիալ-իրավական պետության, որպես նոր և նորագույն ժամանակշրջանի երրորդ (առաջին սերունդը՝ իրավական պետությունն է, երկրորդը՝ սոցիալական և երրորդը՝ սոցիալ-իրավական) սերնդի պետականության էությունը և բովանդակային առանձնահատկությունները:

Դրված նպատակին հետամուտ, հեղինակը փորձել է լուծել հետևյալ **խնդիրները.**

- բացահայտել սոցիալ-իրավական պետության էությունը, առանձնահատկությունները և ժամանակակաից ընկալումները.
- վերլուծել սոցիալ-իրավական պետության կայացման հետ կապված հիմնախնդիրների բովանդակությունը և դրանց լուծման ուղիները,
- ներկայացնել մարդու իրավունքների երաշխավորված պաշտպանության կառուցակարգերը սահմանադրական բարեփոխումների համատեքստում,
- արժևորել սոցիալ-իրավական պետության և մարդու իրավունքների երաշխավորված պաշտպանության դերն ու նշանակությունը հասարակության կայուն զարգացման և երկրի անվտանգության ապահովման համատեքստում:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքերը.** Սույն ատենախոսական աշխատանքի ընթացքում հեղինակն օգտագործել է ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ գիտական մեթոդները:

Որպես ընդհանուր գիտական մեթոդաբանություն օգտագործվել է

դիալեկտիկայի օրենքներն ու կատեգորիաները՝ վերլուծությունը և սինթեզը, համադրումը և համեմատումը, այնպես էլ իրավագիտության հատուկ մեթոդները՝ իրավաբանական վերլուծության, իրավահամեմատական և համակարգային վերլուծության:

**Հետազոտության օբյեկտն է** սոցիալ-իրավական պետության և մարդու իրավունքների վերաբերյալ հասարակական հարաբերությունները:

**Հետազոտության առարկան է** սոցիալ-իրավական պետության էության, բովանդակային առանձնահատկությունների, մարդու իրավունքների երաշխավորված պաշտպանության հետ յկապված հիմնախնդիրների ուսումնասիրությունը:

**Հետազոտության տեսական հիմք** են կազմել իրավունքի տեսության և սահմանադրականության բնագավառի հայտնի գիտնականների՝ Ն.Ա. Ապիյանի, Ն.Ա. Այվազյանի, Գ.Բ. Դանիելյանի, Գ.Գ. Հարությունյանի,Ա.Հ.Խաչատրյանի, Հ.Մ. Խաչատրյանի, Հ.Մ. Ստեփանյանի, Գ.Հ. Սաֆարյանի, Ս.Ս.Ալեքսևի, Մ.Ի. Բայտինի, Վ.Դ. Մալցևի, Մ.Ն. Մարչենկոյի, Վ.Ս. Ներսեսյանցի, Վ.Դ. Սորոկինի և այլոց աշխատությունները:

**Հետազոտության նորմատիվ հիմքն են՝** 1995 թ., 2005 և 2015 թվականների ՀՀ Սահմանադրության խմբագրությունները, ՀՀ գործող օրենսդրությունը և միջազգային փաստաթղթերը:

**Հետազոտության գիտական նորույթը.** Սույն ատենախոսական աշխատանքի գիտական նորույթն արտահայտվում է հետսահմանադրական բարեփոխումների պայմաններում իրավական, սոցիալական (սոցիալ-իրավական) պետության կայացման, մարդու իրավունքների երաշխավորված պաշտպանության կառուցակարգերի հետ կապված համալիր հարցադրումների վերլուծության և դրանց համարժեք լուծումների առաջադրման մեջ:

Հեղինակը սոցիալ-իրավական պետությունը դիտարկում է որպես զարգացման երրորդ սերնդի պետականություն, որը մարմնավորում է իրավական և սոցիալական տեսանկյունները և հանդես է գալիս որպես հասարակական հարաբերությունների սահմանադրականացման ու սոցիալական արդարության

հիման վրա կազմակերպված քաղաքական իշխանության նոր տիպ:

Այս առումով, հեղինակը բացահայտել է սոցիալ-իրավական պետության էությունը, բովանդակային առանձնահատկությունները և հիմնական առաքելությունը՝ ապահովել մարդու անվտանգ, բարեկեցիկ և կայուն զարգացումը:

**Գիտական նորույթի տարրերն են պարունակում նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում.**

1. Սոցիալ-իրավական պետության սահմանադրաիրավական հայեցակարգն ունի զգալի ներուժ, որի հետևողական-գործնական իրականացումը էապես կբավարարի հասարակության սոցիալ-տնտեսական և սոցիալ-հոգեբանական վիճակը:

2. Մեզանում սոցիալ-իրավական պետության կայացման հիմնական խոչընդոտներն են. անցումային շրջանի ոչ հետևողական զարգացումը և հակասականությունը, հանրային խնդիրների հատվածային և ոչ համակարգային լուծումները, սոցիալ-իրավական պետության սահմանադրական մոդելի ոչ բավարար (համարժեք) իրավական ապահովումը, անձի սոցիալական իրավունքների իրականացման իրական կառուցակարգերի բացակայությունը և այլն, որոնք բացասաբար են անդրադառնում հանրային իշխանության հեղինակության և սոցիալական ու իրավական լեգիտիմության վրա:

3. Սոցիալ-իրավական պետության տեսության դիտարկման ժամանակ տեսական և գործնական տեսանկյունից կարևորվում է այդ գործընթացի, միջավայրի ձևավորման և զարգացման վրա ազդող ոչ միայն նյութական, այլև հոգևոր (ինտելեկտուալ) առումով ուշադրություն դարձնելը: Ընդ որում, մեթոդաբանական առումով անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ նյութական՝ տնտեսական, սոցիալ-քաղաքական և այլ միջավայրը նյութական բարիքների հետ միասին սահմանափակ է ժամանակով, տարածությամբ և ծավալով, հասարակական-տնտեսական շրջանակներով, ֆորմացիաներով կամ որոշակի քաղաքակրթությամբ, այն դեպքում, երբ հոգևոր միջավայրը, իսկ դրա հետ միասին նաև հոգևոր բարիքները և արժեքները «անսահմանափակ» և «համընդհանուր են»:

4. Աշխատանքում հիմնավորվում է այն տեսակետը, ըստ որի սոցիալ-իրավական պետության իդեալի հիմքում ընկած է բոլորի համար միասնական և հավասար իրավունքների պահանջը, կարելի է պնդել, որ պետությունը ընդհանուր իրավաբանական հավասարության, բարօրության նպատակով պետք է միավորի բոլոր սոցիալական խավերին համընդհանուր շահերի և ազգային իդեալի շուրջ:

5. Սոցիալ-իրավական պետությունը՝ հանրային իշխանության կազմակերպման այնպիսի կառուցակարգ է, որի հիմքում ընկած են ազատական գաղափարախոսությունը, իրավունքի գերակայությունը, սոցիալական շուկայական հարաբերությունները և մարդու ինքնավար ու նախաձեռնող կացութաձևը:

6. Սոցիալ-իրավական պետության համար ելակետային նշանակություն ունեն սահմանադրական մակարդակով ամրագրված բոլոր նորմ-սկզբունքների հետևողական իրացումն ու պաշտպանությունը: Դա անհրաժեշտ է նաև մարդու իրավունքների երախավորված պաշտպանության համար:

7. Իրավունքի գերակայությունը, ժողովրդավարական սկզբունքները, իրավական օրենսդրության համակարգը կոչված են ապահովելու սոցիալ-իրավական պետության բնականոն գործունեությունը և հասարակության վերարտադրությունը մարդկային կյանքի բոլոր ոլորտներում:

8. Սոցիալ-իրավական պետության գոյության արդարացումը հիմնավորվում է մարդու իրավունքների երաշխավորված պաշտպանությամբ և սոցիալական ապահովվածության հուսալի կառուցակարգով, անձնական և հասարակական անվտանգության ապահովման կայուն մեխանիզմով:

9. Հասարակական հարաբերությունների սահմանադրականացումը և սոցիալականացումը այն հիմնարար սոցիալ-իրավական գործիքակազմն է, որի միջոցով խթանվում է հասարակության առաջընթաց զարգացումը, ապահովվում է հասարակական բարիքի բանական վերարտադրությունը և անհատի ինքնավար կարգավիճակի բնականոն զարգացումը:

10. Սոցիալ-իրավական պետության սահմանադրական մոդելը ենթադրում է պատմական նոր տիպի տնտեսական, շուկայական և ֆինանսավարկային հարաբերությունների հաստատում, հասարակության նոր որակի քաղաքական և

իրավական համակարգերի կայացում:

11. Սոցիալ-իրավական պետությունը սահմանադրական կարգի առաջնային-հիմնային դրույթներից է, որը կանխորոշում է սահմանադրական և օրենսդրական մյուս նորմերի բովանդակությունը և դրանց կիրառման պատշաճ իրավական ընթացակարգը, ինչպես նաև ապահովում է հասարակական կյանքի զարգացման անհրաժեշտ կառուցակարգերը:

**Հետազոտության տեսական նշանակությունը** նրանում է, որ սույն աշխատանքի արդյունքները սոցիալ-իրավական պետության և մարդու իրավունքների վերաբերյալ որոշակիորեն կխորացնեն մեր գիտելիքները այդ բնագավառում և կարող են օգտագործվել հետագա հետազոտողների կողմից՝ իրենց գիտական ուսումնասիրությունների ընթացքում:

**Հետազոտության գործնական նշանակությունը** նրանում է, որ աշխատանքում ձևակերպված դրույթները և եզրահանգումները կարող են օգտագործվել պետականաշինության իրավաստեղծ և իրավակիրառ գործընթացներում, ինչպես նաև ուսումնական դասընթացների ժամանակ:

**Հետազոտության արդյունքների փորձաքննությունը.** Սույն ատենախոսական աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետահիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ իրականացվել է աշխատանքի քննարկումը և գրախոսությունը: Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի վեց գիտական հոդվածներում:

**Աշխատանքի կառուցվածքը.** Սույն ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են վեց ենթագլուխ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

## Աշխատանքի հիմնական բովանդակությունը

**Աշխատանքի ներածությունում** հիմնավորվում է թեմայի հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության հիմնական դրույթները, աշխատանքի գիտական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլխում՝ «**Իրավական պետության հայեցկարգային զարգացումը և ժամանակակից ընկալումները**» վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «**Իրավական պետության տեսության ձևավորումը և զարգացումը. հայեցակարգերի քննական վերլուծություն**» վերնագրով, խորքային վեչլուծության են ենթարկվում իրավական պետության վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների բազմազանությունը: Հեղինակը գտնում է, որ քննարկվող հայեցակարգերից ոչ մեկը ամբողջությամբ չի ընդգրկում իրավական պետության ողջ պատկերը իր բազմաշերտությամբ հանդերձ, սակայն այդ տեսական-հայեցակարգերը մեկը մյուսին լրացնելով, տալիս են իրավական պետության ընդհանուր իդեալական մոդելը:

Աշխատանքի առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Իրավական պետության էությունը և ժամանակակից սահմանադրական ընկալումները»** վերնագրով, բացահայտվում է իրավական պետության էությունը, բովանդակությունը՝ որպես իրավունքի գերակայության հիման վրա ձևավորված ինքնիշխան քաղաքական համապարփակ կազմակերպություն, որի իշխանությունը սահմանափակված է իրավական օենքներով և մարդու իրավունքներով:

Վերլուծելով իրավական պետության և տեսության վերջին տասնամյակների միտումները, հեղինակը գտնում է, որ անհնար է չհամաձայնել, թեև որոշ վերապահումներով, գրականության մեջ արտահայտված այն կարծիքին, որ XXդ-ի վերջին տասնամյակի իրավագիտակցությունը բնութագրվում է որպես իրավական պետության նկատմամբ բարձր պահանջներով, «նրա կերպարի միֆականացմամբ» և հետևաբար իրավական պետությունը ընկալվում է որպես սոցիալական իդեալ, ինչի փնտրտուքը կլուծի սոցիալական խնդիրները և իմաստ կտա համընդհանուրի կյանքին: Իրավական պետությունը ենթադրում է հասարակական հարաբերությունների որոշակի իրավական կարգավորվածություն և դրանց գործադրման համակարգերի հուսալի և անխափան աշխատանք:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ **«Սոցիալական պետության բնույթը, բնութագրական հատկանիշները և կայացման հիմնախնդիրները Հայաստանի**

**Հանրապետությունում»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Սոցիալական պետության սահմանադրական ամրագրումը և բնութագրական հատկանիշները»** վերնագրով, հեղինակը գտնում է, որ սոցիալական պետության սահմանադրական ամրագրումը ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում դեռևս չի նշանակում այդպիսի պետության փաստացի առկայություն կամ գործառություն, դա միայն առաջին և առաջնահերթ պահանջներից ընդամենը մեկն է, սկիզբը այն վիթխարի աշխատանքի, որի շնորհիվ պետք է կայանա իրական սոցիալական պետությունը: Դա ներառում է ոչ միայն իրավական գործընթացների իրականացում, այլ սոցիալ-տնտեսական բաղադրիչի ապահովում (տնտեսության զարգացում, մարդկանց բարեկեցության ապահովում և այլն):

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Սոցիալական պետության կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»** վերնագրով, քննական վերլուծության են ենթարկվում այն հիմնախնդիրները, որոնց լուծման շնորհիվ հնարավորություն է ստեղծվում սոցիալական պետության վերջնական կայացման համար: Ըստ հեղինակի՝ սոցիալական պետությունը նոր տիպի պետականության մշակույթ է, որը համախմբում է ազատության և իշխանության սկզբունքները՝ անհատի բարկեցության և հասարակության բարօրության ապահովման նպատակով:Դրա համար սոցիալական պետությունում յուրաքաչյուր քաղաքացու համար պետք է հասանելի լինեն Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները և ազատությունները:

Սոցիալական պետությունը պետության մեկընդմիշտ ձևավորված կարծրատիպ չէ, այլ զարգանում և փոխակերպվում է այն չափով, որքանով զարգանում և փոխակերպվում են հասարակությունը և տնտեսությունը՝ մշտապես պահպանելով փոխկապվածությունը միմյանց միջև: Սոցիալական պետությունը խոհեմ և ողջամիտ հավասարակշռության պահպանողն է շուկայական տնտեսության և դրանից բխող փաստական անհավասարության միջև:

Հայաստանի Հանրապետությունը որպես սոցիալական պետություն չի կարող բացառել իր անդամների հավասարության սկզբունքը, սակայն այն ոչ թե

պետք է բացարձականացվի, այլ դիտվի որպես հասարակության յուրաքանչյուր անդամի իրավունք, որի իրացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը պետության պարտավորությունն է: Այս սկզբունքը ենթադրում է նաև, որ պետության պարտքն է երաշխավորել, որպեսզի հասարակության առանձին անդամներ, սոցիալական կամ այլ խմբեր կողմնակալ վերաբերմունքի չարժանանան:

Հատկապես անցումային փուլում պետության կարևորագույն գործառույթներից մեկն է դառնում կառավարելի անցումը շուկայական տնտեսական հարաբերությունների:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ «**Մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների համակարգը սոցիալ-իրավական պետությունում**» վերնագրով, բաղկացած է երկու ենթագլխից:

Երրորդ ենթագլխի առաջին ենթագլխում՝ «**Մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների համակարգը և պաշտպանվածության հիմնախնդիրը սոցիալ-իրավական պետությունում**» վերնագրով, հանգամանալից վերածվում է մարդու հիմնական իրավունքների և ազատությունների համակարգը և տրվում է դրանց բովանդակային առանձնահատկությունները:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության 2015 թ. փոփոխված Սահմանադրությունում հիմնական իրավունքների համակարգը հետևյալն է.

- Մարդու արժանապատվությունը, կյանքը, անձեռնմխելիությունը և անձնական ազատությունը (հոդվածներ 23-27),
- Հավասարությունը (հոդվածներ 28-30),
- Մարդու մասնավոր ոլորտի պաշտպանությունը (հոդվածներ 31-34),
- Մարդու նեղ սոցիալական ոլորտը՝ ամուսնությունը, ընտանիքը, ծնողները, երեխաները, նրանց կրթությունը (հոդվածներ 35-38),
- Մարդու ազատությունը (հոդվածներ 39-60),
- Արդարադատական իրավունքները և երաշխիքները (հոդվածներ 61-73),
- Հիմնական իրավունքների ծավալը, սահմանափակումները և դրանց ներկայացվող պահանջները (հոդվածներ 74-81),

Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների երաշխավորված պաշտպանության հիմնախնդիրները»** վերնագրով, քննքրկվում են իրավունքների և ազատությունների պաշտպանվածության հիմնական երաշխիքները: Հեղինակի կարծիքով, 2015 թ. սահմանադրական բարեփոխումների առանցքային ուղղություններից մեկը՝ մարդու և քաղաքացու բավականին լայն իրավունքների ամրագրումն է, այնպես էլ դրանց երաշխավորված պաշտպանությանը: Այս առումով, նպատակ ունենալով վերացնել 2005թ. սահմանադրական փոփոխությունների բացերը և հետևելով միջազգային առաջադիմական փորձին ու սահմանադրական իրավունքի զարգացումների արդի միտումներին՝ 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը.

- հստակեցրեց հիմնական իրավունքների բնույթը՝ որպես սուբյեկտիվ իրավունքներ,
- սահմանազատեց անմիջականորեն գործող հիմնական իրավունքները օրենսդրական երաշխիքներից ու պետության նպատակներից,
- ամրագրեց մի շարք նոր հիմնական իրավունքներ,
- հստակեցրեց հիմնական իրավունքների սահմանափակումների հիմքերը և դրանց ներկայացվող պահանջները,
- հիմնական իրավունքների գլխին հաղորդեց տրամաբանական կուռ կառուցվածք,

ՀՀ Սահմանադրության հիմքում ընկած է այն գաղափարը, որ ոչ թե պետությունն է հիմնական իրավունքների միջոցով մարդուն տալիս կամ շնորհում որոշակի ազատություններ և իրավունքներ, այլ որ այդ հիմնական իրավունքների բովանդակությունը՝ մարդու բնական ազատությունը, նախորդում է սահմանադրությանը:

**Ատենախոսության հիմնական եզրակացություններն են.**

1. Իրավական պետությունը ենթադրում է հասարակական հարաբերությունների ոչ միայն համարժեք իրավական կարգավորվածություն, այլև

դրանց սահմանադրականացում, այսինքն՝ ժողովրդավարական դրույթների և մարդու իրավունքների անմիջական գործադրում ու դրանց երաշխավորված պաշտպանություն:

2. Իրավական պետության հիմնարար հատկանիշն է՝ իրավունքով (բնական և պոզիտիվ իրավունքով), հանրային իշխանության սահմանափակումը՝ ինչի շնորհիվ այն ինքնին վերածվում է մարդու իրավունքների և իրավունքի, գերակայության երաշխավորի՝ իր պետահիրավական կառուցակարգերով, ինստիտուտներով և կազմակերպչական այլ ձևերով:

3. Մեզանում սոցիալ-իրավական պետության կայացման համար անհրաժեշտ նախադրյալներ կարող են դիտվել.

- իրավունքի գերակայության ճանաչումն օրենսդրական, իրավակիրառ և իրավապահ մակարդակներով,
- հանրային իշխանության նկատմամբ հասարակական արդյունավետ վերահսկողության մեխանիզմի առկայությունը,
- մարդու արժանապատվության ճանաչումը և հարգումը, նրա իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովումը,
- հանրային իշխանության մարմինների ձևավորումը՝ պարբերաբար, ազատ և արդար ընտրությունների միջոցով,
- անկախ և ինքնավար դատական իշխանության առկայությունը և արդարադատության մատչելիության ապահովումը,
- տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության երաշխիքների համակարգը,
- անկախ տեղեկատվության առկայությունը:

Նշված նախադրյալները փոխկապված են և կազմում են մեկ միասնական ամբողջություն:

4. Իրավական պետության չափորոշիչների մասին հարցի լուծման ժամանակ տեսական և մեթոդական առումով չափազանց կարևոր է համարվում հստակ տարբերություն դնել այնպիսի երևույթների միջև, ինչպիսիք են՝

ա) պատմականորեն առաջին մարդասիրական գաղափարները, որոնք ծագել են պետականորեն կազմակերպված հասարակության կազմավորման և զարգացման վաղ փուլերում և որոնք ավելի ուշ ժամանակաշրջանում դրանց հենքի վրա ու զարգացման մեջ իրենց բնույթով համանման գաղափարների առաջացման համար կատալիզատորի դեր են խաղացել,

բ) XIX դ. վերջում և XX դ.սկզբում մարդասիրական գաղափարների հիման վրա առաջացած իրավական պետության հայեցակարգը, որը հասարակության և դրա հետ նաև իրավական մշակույթի զարգացմանը զուգընթաց որոշ փոփոխությունների է ենթարկվում,որն անփոփոխ կերպով առաջ է գալիս մի յուրահատուկ սահմանադրական սկզբունքի, կարգախոսի և գործողության ղեկավարման տեսքով,

գ) իրավական պետականության գաղափարների իրականացումը, հիմնական դրույթների՝ տվյալ պետության տեսության մեջ պարունակող պահանջների կյանքի կոչումը:

Այնպիսի երևույթների և հասկացությունների հստակ տարբերակումը և տարանջատումը, ինչպիսիք են՝ գաղափարը, հայեցակարգը (տեսությունը) և դրա իրականացումը, «իրավական պետություն» անվամբ իրական կազմավորման տեսքով կյանքի կոչումը, թույլ է տալիս խուսափել դրանց շփոթումից և այն առումով անիմաստ վեճերի առաջացումից (ակնհայտության պատճառով), թե ինչն է ավելի վաղ առաջանում, և ինչը՝ ավելի ուշ: Բացի այդ, դա թույլ է տալիս ավելի հստակ պատասխանել իրավական պետության գաղափարական ակունքների, դրանց ի հայտ գալու և կազմավորման ժամանակի, ինչպես նաև դրանց հիման վրա որոնելի պետահիրավական ամբողջական հայեցակարգի ձևավորման մասին հարցերին:

5. Իրավական պետության տեսության վերաբերյալ վստահորեն կարելի է ասել, որ դրա խորքային արմատները ընկած չեն Նոր ժամանակներում: Այն ձևավորվել և զարգացել է հասարակության զարգացման երկար ու ձիգ դարերի ընթացքում՝ Հին և Նոր և նորագույն ժամանակների, Անտիկ աշխարհների մարդասիրական գաղափարների վրա:

6. Դիտարկելով այն սուբյեկտիվ (սուբյեկտիվ-օբյեկտիվ) նախադրյալները և գործոնները, որոնք ազդեցություն են ունեցել և ունենում են իրավական պետության տեսության տարբեր տեսանկյունների ու կողմերի և դրա կառուցման պրակտիկայի վրա, անհրաժեշտ է նշվածից բացի մատնանշել նաև այն, որ տարբեր, միմյանց հետ չհամընկնող և հաճախ հակասող հայացքները և դատողությունները հետազոտողների կողմից արտահայտվում են այլ հարցերում: Դրանք հարցեր են, որոնք վերաբերում են՝

ա) իրավական պետության՝ որպես երևույթի, և նրա տեսության էությանը, բովանդակությանը, հիմնական հատկանիշներին և նշանակությանը,

բ) իրավական պետության իրական և ձևական, իրական և վիրտուալ լինելուն,

գ) իրավական պետության տեսությանը՝ որպես ժամանակակից պետաիրավական իդեալի,

դ) իրավական պետության սոցիալական, տնտեսական, քաղաքական և գաղափարական հիմքերին,

ե) այլ քաղաքական-իրավական տեսությունների համակարգում իրավական պետության տեսության տեղին և դերին,

զ) իրավական պետության և քաղաքացիական հասարակության հարաբերակցությանը, նրանց փոխկապակցվածության և փոխգործակցության բնույթին,

է) իրավական պետության գնահատականին և արժեքային բնութագրին,

ը) իրավական պետության սահմաններում իշխանության առանձնահատկություններին և այլն:

7. Իրավական պետության հռչակումն, ամենից առաջ, պետության բնույթի և հասարակական հարաբերությունների յուրահատկության վկայությունն է, դա պետության կազմակերպական առանձնահատկության արտահայտությունն է, հաստատումն այն բանի, որ տվյալ հասարակության մեջ փոխհարաբերությունների հիմքում դրվում են իրավունքն ու իրավական օրենքը: Նման պետության համար խնդիր է առաջադրվում՝ այդ սկզբունքին ծառայեցնել պետության ու

հասարակության սոցիալական վարքագիծը, անհատի համար հստակեցնել վարքի կանոններն ու իր ազատության շրջանակները, երաշխավորել այդ ազատությունը:

8. Իրավական պետության մեջ սոցիալական հանրությունը ստանում է որոշակի կանոնակարգված դիմագիծ, որը բնորոշվում է որպես իրավական կարգ, իսկ անհատը դառնում է իրավական անձ՝ իր սուբյեկտիվ ու բնական իրավունքներով հանդերձ, նրա հարաբերությունները հասարակության մյուս անդամների հետ որոշակիորեն կարգավորված իրավահարաբերությունների բնույթ են ստանում: Նման հասարակությունն անխուսափելիորեն պետք է ունենա նաև սահմանադրորեն կարգավորված իրավահարաբերությունների վերահսկման անընդհատությունն ապահովող սահմանադրական համակարգ, որը երաշխավորում է իրավունքով իշխանության սահմանափակումը և իրավական օրենքի գերակայությունը:

9. «Իրավական օրենք» հասկացությունը, որը սերտորեն կապված է իրավական պետության հետ, ունի հարուստ բովանդակություն: Այս հասկացությունից բխում է երկու սկզբունք՝ իրավունքի գերակայության սկզբունքը և օրենքի գերակայության սկզբունքը: Գրականության մեջ այդ սկզբունքները որպես կանոն, հակադրվում են միմյանց կամ հաճախ նույնացվում են միմյանց հետ: Մինչդեռ դրանք տարբեր բովանդակային ընդգրկում ունեցող սկզբունքներ են և տարբեր հարթությունների վրա են գտնվում ու միանգամայն սխալ է դրանց մեխանիկական համադրումը: Երկու սկզբունքներն էլ իրենց իրավական բովանդակության շրջանակներում, կարևոր նշանակություն ունեն իրավական պետության ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ գործունեության համար: Իրավաստեղծ գործունեության ոլորտում իրավունքի գերակայության սկզբունքը ենթադրում է, որ պոզիտիվ իրավունքում պետք է իրենց արտացոլումը գտնեն միայն բնական իրավունքի պահանջներին համապատասխանող նորմեր:Իրավունքի գերակայության սկզբունքի գործնական նշանակությունը պետական մարմինների և պաշտոնատար անձանց իրավակիրառ գործունեության ընթացքում առավել ցայտուն արտահայտվում է այն դեպքերում, երբ պոզիտիվ իրավունքի համակարգում տեղ են գտնում բացեր, հակասություններ և անորոշ

դրույթներ: Այդ բացերը հաղթահարելու, հակասություններր լուծելու և անորոշ դրույթները մեկնաբանելու ընթացքում պետական մարմինները և պաշտոնատար անձինք պետք է ղեկավարվեն իրավունքի գերակայության սկզբունքներով և բնական իրավունքի հիմնադրույթներով:

10. Օրենքի գերակայության սկզբունքն առավելապես կառուցակարգային բնույթ ունի և ենթադրում է, որ հասարակական հարաբերությունների համապատասխան ոլորտների անհրաժեշտ, առաջնային իրավական կարգավորումը պետք է իրականացվի բարձրագույն ներկայացուցչական մարմնի՝ խորհրդարանի կողմից ընդունվող և նորմատիվ իրավական ակտերի համակարգում առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտով՝ օրենքով: Այդ գաղափարն ամրագրված էր դեռևս ֆրանսիական՝ «Մարդու և քաղաքացու իրավունքների մասին» հռչակագրով և հիմնավորվում էր նրանով, որ խորհրդարանը ձևավորվում է համընդհանուր ընտրությունների միջոցով, օժտված է առաջնային մանդատով, հետևաբար ունակ է առավել լիարժեք արտացոլել ժողովրդի կամքը: Իրավակիրառ ոլորտում այդ սկզբունքը ենթադրում է, որ պետությունը, պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք պետք է ենթարկվեն ինչպես բնական իրավունքին, այնպես էլ հենց իրենց կողմից սահմանված պոզիտիվ իրավունքին:

11. Սոցիալ-իրավական պետության պարադիգմը, արտահայտված է այն պայմանների ստեղծման անհրաժեշտության մեջ, որոնք ապահովում են մարդու արժանապատիվ կյանքը և մարդու ազատ զարգացումը, որն իր արտացոլումն է գտել և օրենսդրորեն ամրագրվել է բազմաթիվ զարգացած երկրների սահմանադրություններում և դասվել է պետության գործառույթների և պարտավորությունների շարքին:

Քաղաքացիների սոցիալական պաշտպանության (պաշտպանվածության) և սոցիալական ապահովման իրավունքը, որպես երրորդ սերնդի մարդու իրավունքներ, արդեն իսկ ձեռք են բերել հիմնական իրավունքների կարգավիճակ և նույնիսկ դասվում են մարդու բնականոն իրավունքների շարքին:

12. Սոցիալական պետության սահմանադրական գործնական իրականացումը

հանգեցրեց հասարակական-քաղաքական ինստիտուտների ժողովրդավարացման անհրաժեշտությանը՝ երկրների ազգային մակարդակներում, սոցիալական կողմնորոշվածությամբ տնտեսության կառուցմանը, մարդու նյութական և հոգևոր բարիքների պահանջմունքների բավարարմանը, սոցիալական զարգացումը դարձավ պետական շինարարության առաջնահերթություն արդյունաբերական զարգացած երկրների կարճաժամկետ հեռանկարում: Ընդ որում քաղաքացիների սոցիալական պաշտպանության երաշխիքները գտնվում են այդ առաջնահերթությունների ոլորտում և օրենսդրորեն ամրագրված են սահմանադրական և այլ նորմատիվ իրավական ակտերում:

13. Աշխատանքում հիմնավորվում է սոցիալական պետության հիմնարար հատկանիշները.ազատ շուկայական հարաբերությունների սոցիալական բնույթը հասարակական համերաշխությունը, սոցիալական համագործակցությունը, սոցիալական արդարության սկզբունքի պահպանումը, մարդու սոցիալ-տնտեսական իրավունքների երաշխավորված ապահովվածությունը և սոցիալական պատասխանատվության սկզբունքի ապահովումը:

14. Հեղինակի կարծիքով սոցիալական կարող է համարվել այն հանրային իշխանության քաղաքական կազմակերպությունը, որը իրավաբանական հավասարության պայմաններում ապահովվում է հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի բարեկեցիկ և անվտանգ կյանքը,անհրաժեշտ իրավական դաշտ է ստեղծում յուրաքանչյուրի համար աշխատանքի և հասարակական օգտակար գործունեության ազատ ընտրության իրականացման համար:

**Ատենախոսության հիմնական դրույթներն են արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. **Բարսեղյան Ս.Մ.** Իրավական պետություն և իրավագիտակցության// Լրաբեր հասարակական գիտությունների: №2, 2017, էջ 191-195:

2. **Բարսեղյան Ս.Մ.** Իրավական պետության տեսությամբ ընկալված մարդասիրական գաղափարների ծագումը և զարգացումը // «Արդարություն»,2017,

Հոկտեմբեր, №5(40), էջ 49-54:

3. **Բարսեղյան Ս.Մ.** Արևմուտքում իրավական պետության գաղափարների զարգացումը միջնադարում և նոր ժամանակներում // «Դատական իշխանություն», №5/6 (227-228), 2018, էջ 12-20:

4. **Բարսեղյան Ս.Մ.** Մարդու իրավունքների սոցիալական տեսանկյունները// «Օրինականություն» №103,2018, էջ 58-63:

5. **Բարսեղյան Ս.Մ.** Իրավական պետության հայեցակարգի տեղը և նշանակությունը իրավունքի տեսության համակարգում// «Օրինականություն», №112, 2019, էջ 57-63:

6. **Բարսեղյան Ս.Մ.** Պետությունը որպես սոցիալական արժեհամակարգի// «Օրինականություն», №117, 2020, էջ 63-68:

**Барсегян Самвел Мартиросович**

**Проблемы становления конституционной модели социально-правового государства в Республике Армения.**

**Резюме.**

**Актуальность исследования** данной темы обусловлена возрастающей ролью социально-правового государства в процессе формирования гражданского общества и солидарности армянского народа. В работе всесторонне и обстоятельно рассматриваются проблемные вопросы становления социально-правового государства.

В последнее время обострились проблемы социально-правового государства, в связи с концепцией гражданского общества в констексте национальной идеи Армении в аспекте дальнейшего развития нашего государства. Причем эти проблемы становятся в плане разработки концепции социально-правового государства, а также выработки идеи формирования свободных граждан и свободных собственников, настоящих экономических и правовых отношений независимо от политической власти и политического режима нашего общества.

Следующая проблема данной темы состоит в исследовании двух принципов социально-правового государства: это правопорядок в государстве и защищенность права и свободы гражданина и человека.

Научная новизна данной диссертации выражается в том, что на общетеоретическом уровне детально изучаются проблемы и основные концептуально-теоретические и практико-прикладные подходы к выявлению пути и средства для построения социально-правового государства в нашей стране.

В авторском подходе выявлена следующая проблема становления социально-правового государства-это комплексное изучение необходимых основ легитимизации правопорядка в обществе и государственной власти. По мнению автора сильная и прочная власть-это власть, строго соблюдающая правозаконность.

В работе утверждается, что сущность социально-правового государтства

заключается в определении способов, которыми осуществляются цели и содержания право-порядка, защищенность права человека.

Данное диссертационное исследование, по мнению автора, развивает и дополняет соответствующие разделы теории современного государства, а также проблемные вопросы практического становления социально-правового государства.

Кроме того,в данной диссертации подробно рассматриваются основные признаки и содержательные особенности социально-правового государства.

Материалы диссертации способствуют дальнейшей разработке концептуальных основ теории и практики социально-правового государства.

Материалы исследования также могут быть использованы сотрудниками органов государственной власти и управления, а также в учебном процессе по предметам теории права, конституционного и административного права и других отраслевых дисциплин.

**Практическое значение исследования** заключается в том, что сформулированные выводы и предложения могут способствовать повышению качества и эффективности госуправления и правопорядка.

Высказанные авторские суждения могут быть полезными для уточнения не только доктринального, но и практико-прикладного понимания сущности и содержания социально-правового государства.

Автор считает, что данная проблема исключительно многогранна.Она может быть решена лишь совместными усилиями не только правоведов, но и представителей различных отраслей знаний как теоретической, так и прикладной направленности.

# SAMVEL BARSEGHYAN, son of MARTIROS

## PROBLEMS OF CONSTITUTION MODEL FORMATION OF SOCIAL-LEGAL STATE IN THE REPUBLIC OF ARMENIA


### SUMMARY

Relevance of research of this topic is conditioned by increasing role of social-legal state in the process of civil society formation and solidarity of Armenian nation. Challenging issues of social-legal state formation are extensively and thoroughly examined in this work.

Recently the problems of social-legal state became aggravated with respect to concept of civil society in context of national idea of Armenia in aspect of further development of our state.

Moreover, these problems are stated in plan of concept development of social-legal state, also an idea development of free citizens and free owners, present economic and legal relations, regardless the political power and political regimen of our society.

The next problem of this topic is research of two principles of social-legal state, i.e. law and order in the state and security of the right and freedom of the citizen and human.

Scientific novelty of the thesis is that problems and main conceptual-theoretical and practical- applicable approaches are studied in detail on general theoretic level for detection of the way and means for formation of social-legal state in our country.

The following problem of social-legal state formation is detected in author's approach - the complex study of necessary grounds for law and order legitimization in the society and state. In author's opinion, the strong and settled order of government is the government that strictly keeps the legitimacy. It's stated in the work that essence of social-legal state is definition of methods by which the purposes and contents of law and order,

security of human rights are implemented.

The thesis research, in author's opinion, develops and replenishes corresponding sections of theory of the modern state, also the challenging issues of practical formation of the social-legal state.

Besides, the main signs and substantial particularities of social-legal state are examined in detail in this thesis research. Materials of thesis research promote further development of conceptual grounds of theory and practice of the social-legal state.

Materials of research may be also used by employees of the state power and governmental authorities, also in academic process in the field of theory of law, constitutional and administrative law and other specialized disciplines.

Practical importance of research is that defined conclusions and sentences may promote increasing of quality and effectiveness of state governance and the law and order. Above- mentioned judgments of the author may be useful for specification not only doctrinal but also practical-applicable understanding of essence and contents of social-legal state.

Author thinks that this problem is exceptionally multilateral. It may be solved by mutual efforts of not only lawyers, but also representatives of different disciplines in theoretic and applicable direction.